Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 01 հունիսի 2026թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 17–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան
2. Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը: Զեկուցողներ՝ Էմմա Խաչատրյան և Միքայել Թորոսյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» և բակալավրիատի «Ֆարմացիա» կրթական ծրագրերի ղեկավարների 2025/2026 ուս. տարվա հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:

   Զեկուցողներ՝
   - «Ֆարմացիա» բակալավրի և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար Հ. Սիմոնյան
   - «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար Ա. Հովհաննիսյան
   - «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար Ա. Գեոլչանյան

4. Ընթացիկ Հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Անի Դադայանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ ավագ գիտաշխատողի պաշտոնի հավակնորդ կ.գ.դ, պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին:

Գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը ներկաներին հաղորդեց այն մասին, որ Հովիկ Փանոսյանը Էրազմուս + ծրագրի շրջանակում դասախոսություններ կարդալու նպատակով գործուղվել է Հունաստանի Սալոնիկ և Բուլղարիայի Սոֆիա քաղաքներ (գործուղման վերաբերյալ հրամանը կցվում է), ուստի բացակայում է նիստից: Համաձայն ԵՊՀ գիտական կազմի թափուր պաշտոնի համալրման կարգի 14-րդ կետի՝ գիտական խորհրդի նիստին պաշտոնի հավակնորդի ներկայությունը որպես կանոն պարտադիր է: Հավակնորդի բացակայության դեպքում գիտական խորհուրդը որոշում է կայացնում թեկնածությունը քննարկելու կամ քննարկումից հանելու մասին: Ա. Մկրտչյանը առաջարկեց բաց քվեարկությամբ որոշում ընդունել հարցի քննարկման վերաբերյալ:

Գիտական խորհրդի անդամները բաց քվեարկությամբ (*միաձայն*) որոշեցին հարցը դնել քննարկման և անցկացնել ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրություն:

Գիտական քարտուղար Ա. Դադայանը համառոտ ներկայացրեց Հովիկ Փանոսյանի անձնական գործը: Հովիկ Հարությունի Փանոսյանը ծնվել է 18.11.1976 թ.-ին, ՀՀ Արմավիր քաղաքում: 1994-1999 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, իսկ 1999-2002 թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 2003 թ. ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Գ.00.07 «Մանրէաբանություն»): 2023 թ. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2011 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2025 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: Հ.Հ. Փանոսյանը հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկների, ավելի քան 90 գիտական հոդվածների, հանդիսանում է Springer Nature և Elsevier Academic Press հրատարակչություններում տպագրված 5 գրքերի համախմբագիր: Վերջին 5 տարում հրատարակել է 14 գիտական հոդված՝ բարձր ազդեցության գործակից ունեցող հանդեսներում, 3 գիրք և 7 գրքի գլուխներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 2 թեկնածուական ատենախոսություններ, 32 մագիստրոսական թեզեր և 56 ավարտական աշխատանքներ:

Ներկայումս հանդիսանում է Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչը:

Որոշեցին՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ բ.գ.թ. Ս. Ափոյան, անդամներ՝ բ.գ.թ. Ս. Պետրոսյան և ուսանողուհի Մերի Ղազարյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 20 անդամներից 17-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 17 անդամներ: Հովիկ Հարությունի Փանոսյանի ավագ գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 17 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Հովիկ Հարությունի Փանոսյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատողի պաշտոնում:

2. **Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Էմմա Խաչատրյանի և Միքայել Թորոսյանի տարեկան ատեստավորման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար բ.գ.թ., դոցենտ Անի Դադայանին, ով նախ ներկայացրեց ասպիրանտ Էմմա Խաչատրյանի, ապա՝ Միքայել Թորոսյանի ատեստավորման վերաբերյալ տեղեկատվությունը.

- Ա. Դադայանը գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ավարտվում է ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանի՝ ասպիրանտուրայում ուսուցման երրորդ տարին և կատարված աշխատանքների ներկայացման համար ձայնը տվեց նրան: Էմմա Խաչատրյանը նախ ներկայացրեց նախորդ երկու տարիներին «Կողային ռադիկալում չհագեցած խմբերով տեղակալված (*S*)-α-ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ և բժշկակենսաբանական սկրինինգ» թեմայով ատենախոսության շրջանակներում կատարված գիտահետազոտական աշխատանքները և պատասխանեց ներկաների հարցերին: Նա նշեց, որ ասպիրանտուրայում ուսուցման երրորդ տարում անցել է նաև երկու վերապատրաստումներ՝ Գրայֆսվալդի համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտ Էրազմուս + շարժունություն (01.09.2025 - 30.11.2025թթ.) և Կառլի համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտ (08.04.2026 - 31.07.2026թթ.), «Մասնագիտական վերապատրաստում 2025» դրամաշնորհային մրցույթի շրջանակներում: Այդ ընթացքում իրականացված մեծածավալ գիտահետազոտական աշխատանքների հիման վրա տպագրվել են 2 հոդված՝ Q2-Q3 քառորդներում ներառված ամսագրերում, ևս մեկ մոնոհոդված ընդունված է տպագրման:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով ասպիրանտուրայում ուսուցման երրորդ տարում կատարված աշխատանքները՝ ատեստավորել ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանին:

- Հաջորդիվ Ա. Դադայանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ավարտվում է նաև ասպիրանտ Միքայել Սամվելի Թորոսյանի՝ ասպիրանտուրայում ուսուցման

երրորդ տարին և կատարված աշխատանքների ներկայացման համար ձայնը տվեց նրան: Միքայել Թորոսյանը ներկայացրեց «Եռաչափ տպագրությամբ կերամիկական իմպլանտների ստացումը և դրանց մեջ հակաբիոտիկների ներդրման արդյունավետության հետազոտումը» թեմայով ատենախոսության շրջանակներում իրականացված գիտահետազոտական աշխատանքները և պատասխանեց ներկաների հարցերին: Նա տեղեկացրեց, որ ասպիրանտուրայում ուսուցման երկրորդ տարվա ընթացքում կատարված փորձնական աշխատանքների հիման վրա տպագրվել է մեկ մոնոհոդված Proceedings of the YSU B: ամսագրում Chemical and Biological Sciences ամսագրում՝ Extraction of trimethylbenzoyl diphenylphosphine oxide from the cured PEGDA-Hydroxyapatite bone graft վերնագրով: Կատարվել են նաև պոլիմերի հատկությունների բարելավմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքում տպագրության է պատրաստվել Effect of layer thickness of 3D printed dielectric elastomers վերնագրով հոդվածը, որն ընդունվել է Advanced Materials Technologies ամսագրի կողմից և առաջիկայում կտպագրվի: Իրականացվել են նաև տարբեր կենանիների ոսկրային թափոններից ստացվող և ոսկորների աճը խթանող հիդրոքսիապատիտի ուսումնասիրության վերաբերյալ աշխատանքներ: Ստացված արդյունքների հիման վրա տպագրվել է 1 հոդված Environmental Science and Pollution Research ամսագրում՝ Valorization of bone waste: effect of animal bone origin on hydroxyapatite structure and properties վերնագրով: Ներկայումս շարունակվում են ուսումնասիրությունները՝ հակաբիոտիկի ազդեցությունը պոլիմերման վրա և վերջինիս լուծահանումը պոլիմերի մատրիցից:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով ասպիրանտուրայում ուսուցման երրորդ տարում կատարված աշխատանքները՝ ատեստավորել ասպիրանտ Միքայել Սամվելի Թորոսյանին:

3. **Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» և բակալավրիատի «Ֆարմացիա» կրթական ծրագրերի ղեկավարների 2025/2026 ուս. տարվա հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:**

Լսեցին՝

3.1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ք.գ.թ. դոցենտ Ա. Մկրտչյանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն մասին, որ համաձայն ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման գիտխորհուրդը պետք է լսի և գնահատի կրթական ծրագրերի հաշվետությունները:

Ելույթ ունեցան «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը և «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանը, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

Հ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ կազմվել և հաստատվել է «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի 2026/30 ուսումնական պլանը, որը 2025/29 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

«Կենսաքիմիա» և «Մանրէաբանություն» մոդուլացված դասընթացները դասավանդող դասախոսների հետ կազմվել են դասընթացների դասապլանները ըստ դասընթացի նկարագրիչների: Տեղի է ունեցել հանդիպում «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացը դասավանդող դասախոսի հետ, քննարկվել է դասընթացի բովանդակության վերանայման, ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող թեմաների ներառման հարցը: Արդյունքում վերանայվել է դասընթացի նկարագրիչը և ներառվել մասնագրում:

Հ. Սիմոնյանը և Ա. Գեոլչանյանը հաղորդեցին նաև, որ մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների հետ:

- Սահիկաշարի օգնությամբ ուսանողներին ներկայացվել է ուսումնական ստորաբաժանումը, կրթական ծրագիրը սպասարկող մասնագիտական ամբիոնները, կրթական ծրագիրը, ինչպես նաև ֆարմացիա մասնագիտությանը վերաբերող մանրամասները և ընտրված մասնագիտությամբ կարիերայի զարգացման հեռանկարները:
- Ֆարմացիայի ինստիտուտի գրասենյակի աշխատակիցների հետ միասին ուսանողներին ներկայացվել է ուսումնական գործընթացում թվային գործիքների օգտագործման կարգը և դրանց անհրաժեշտությունը, հետադարձ կապի գործիքները, ինչպես նաև ֆինանսական աջակցության ծրագրերը:
- Ներկայացվել է նաև ուսանողների հետազոտական ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները:
- Քննարկվել են կրթական պրոցեսին վերաբերող հարցեր: Մասնավորապես, դասընթացների քննական ձևերի, գնահատման բաղադրիչների, ընթացիկ քննությունների, ուսումնական կիսամյակի կառուցվածքի, ուսումնական պլանում առաջիկա չորս տարիներում ներառված դասընթացների մասին:

Հ. Սիմոնյանը հավելեց, որ «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողների հետ քննարկվել է հարակից կրթական ծրագրերից ընտրվող դասընթացների ցանկը և խորհրդատվություն է տրվել դասընթացների ընտրության վերաբերյալ:

«Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված դասընթացների դասավանդող դասախոսների հետ քննարկվել է ԵՊՀ-ի կողմից մշակված օրացուցային պլանների նոր ձևաչափը, և օրացուցային պլանը կազմելու ընթացքում առաջացած հարցերի դեպքում տրվել են պարզաբանումներ:

Պարբերաբար մոնիթորինգ է իրականացվել e-learning առցանց ուսուցման համակարգում դասընթացների դասապլանների, ուսումնառության նյութերի, հարցաշարերի տեղադրման ուղղությամբ:

Ավարտական կուրսի ուսանողներին պարբերաբար տեղեկացվել է ավարտական աշխատանքների ձևակերպման և ներկայացման կարգը, ավարտական աշխատանքի պաշտպանության փուլերը և պահանջները, վերջնաժամկետները, e-learning առցանց ուսուցման համակարգում պահանջվող գործողությունները, ինչպես նաև ստուգվել են պահանջվող ժամետներում ուսանողների կողմից տեղադրված ավարտական աշխատանքները:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանի և «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանի հաշվետվությունները:

3.2. «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանին և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանին, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

Նրանք նշեցին, որ կազմվել և հաստատվել է «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի 2026/27 ուսումնական պլանը, որը 2025/26 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

ԵՊՀ-ի կողմից հայտարարված «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում» դասընթացի մշակման մրցույթի արդյունքում ներկայացված դասընթացի երեք նկարագրիչներից «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառելու նպատակով ընտրվել է այն տարբերակը, որտեղ առավել շեշտադրում է եղել մոլեկուլների կառուցվածքի և դրանց հատկությունների մոդելավորմանը, նյութագիտության խնդիրների լուծման և տվյալների ձեռքբերմանն ուղղված ծրագրավորման մեթոդներին:

Մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների հետ:

- Ներկայացվել է կրթական գործընթացը, «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանը, դասընթացների քննական ձևերը և այլն:
- Ներկայացվել են մագիստրոսական թեզերի ղեկավարների գիտական ուղղությունները, ղեկավարների կոնտակտները, ինչպես նաև թեզերի կատարման ընթացակարգը:
- Ներկայացվել է 2-րդ կիսամյակում նախատեսված կամընտրական դասընթացների նկարագրիչները, քննարկվել է կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգը:

«Դեղերի որակի վերահսկում» մագիտրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված դասընթացների դասավանդող դասախոսների հետ քննարկվել է ԵՊՀ-ի կողմից մշակված օրացուցային պլանների նոր ձևաչափը, և օրացուցային պլանը կազմելու ընթացքում առաջացած հարցերի դեպքում տրվել են պարզաբանումներ:

Պարբերաբար մոնիթորինգ է իրականացվել e-learning առցանց ուսուցման համակարգում դասընթացների դասապլանների, ուսումնառության նյութերի, հարցաշարերի տեղադրման ուղղությամբ:

Ավարտական կուրսի ուսանողներին պարբերաբար տեղեկացվել է մագիստրոսական աշխատանքների ձևակերպման և ներկայացման կարգը, ավարտական աշխատանքի պաշտպանության փուլերը և պահանջները, e-learning առցանց ուսուցման համակարգում պահանջվող փուլային գործողությունները և դրանց վերջնաժամկետները, ինչպես նաև ստուգվել են պահանջվող ժամետներում ուսանողների կողմից տեղադրված փուլային առաջադրանքները:

Ա. Հովհաննիսյանը հաղորդեց այն մասին, որ կազմվել և հաստատվել է «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագրի 2026/27 ուսումնական պլանը, որը 2025/26 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

Փոփոխության են ենթարկվել կամընտրական ծրագրի 2 առարկա, մասնավորապես, «ԿԱՄ-երի որակի հսկում» դասընթացը փոխարինվել է «Թվային տեխնոլոգիաները դեղարդյունաբերության մեջ» դասընթացով, իսկ «Գենային թերապիա» դասընթացը՝ «Բժշկական մանրէաբանություն» դասընթացով:

Ա. Հովհաննիսյանը և Հ. Սիմոնյանը հավելեցին նաև, որ 2025-2026 ուսումնական տարում «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի մագիստրատուրայի ուսանողները հաջողությամբ պաշտպանել են իրենց մագիստրոսական թեզերը: Հանձնաժողովի կողմից ընդգծվել է մագիստրոսական թեզերում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես մասնագիտական գիտելիքների, հետազոտական հմտությունների, անալիտիկ մտածելակերպի զարգացմանը նպաստող և իրենց մասնագիտական կարողությունների դրսևորման կարևոր փուլ: Դասավանդողների կազմում փոփոխություններ չեն եղել, ընդհանուր առմամբ ուսանողների կողմից դասավանդումը գնահատված է լավ:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանի և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանի հաշվետվությունները:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**